ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» 01 2023թ. ՆՄՈ/32-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N393 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետով, հիմք ընդունելով «Ջրառատի Թաթուլ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2023 թվականի հունվարի 13-ի N8 գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի մի շարք

որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N393 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշմամբ հաստատված N92 հավելվածի 4-րդ կետում «Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Ջրառատ համայնք, Իսահակյան 2» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Ջրառատ գյուղ, Իսահակյան 2 դպրոց» բառերով:
2. Հանձնարարել «Ջրառատի Թաթուլ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին (Մ. Համբարյան)՝ կազմակերպության կանոնադրության փոփոխությունը սահմանված կարգով և ժամկետում գրանցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Недействительная подпись

VERIFIED OCSP 26.01.2023 12:12:26 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505